ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Լրացավ Երևանի պետական համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, հմուտ մանկավարժ Գերասիմ Հարությունի Փանոսյանի 80-ամյակը: Լինելով գիտնական իր ողջ էությամբ խոր գիտելիքներ ունեցող վառ անհատականություն, սկզբունքային և հայրենասեր մտավորական նա ավելի քան հինգ տասնամյակ անմնացորդ նվիրվել է իր սիրած գործին՝ գիտամանկավարժական գործունեությանը: Մեծ է պրոֆեսոր Գ. Փանոսյանի ներդրումը հայ կենսաբանական գիտական մտքի զարգացման, Հայաստանում կենսաբանության ժամանակակից բնագավառների մասնագետների պատրաստման գործում: Հարյուրավոր երիտասարդ կենսաբաններ են կրթվել, մասնագիտական իրենց մկրտությունը ստացել, ունկնդրելով նրա հետաքրքիր և բովանդակալից դասախոսությունները, մի քանի տասնյակը նրանցից իրենց գիտական ուղին սկսել են պրոֆեսոր Գ.Հ. Փանոսյանի անմիջական աջակցությամբ և ղեկավարությամբ:

Գերասիմ Հարությունի Փանոսյանը ծնվել է 1930թ. Մոսկվայում, հայտնի գիտնական, մանրէաբան, Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Հարություն Փանոսյանի ընտանիքում, ինչը, հավանաբար, հետագայում վճռորոշ դեր է խաղացել երիտասարդ Գ.Փանոսյանի մասնագիտական կողմնորոշման գործում: Այնուհետև Փանոսյանների ընտանիքը տեղափոխվել է Երևան, և նա 1953 թվականին փայլուն գնահատականներով ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը: 1953-1956 թվականներին սովորել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում և հայրենական խոշոր ֆիզիոլոգ, առաջադեմ և նորարար գիտնական Խ.Ս. Կոշտոյանցի ղեկավարությամբ 1957 թվականին պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, նվիրված այդ ժամանակի հրատապ հիմնահարցերից մեկին՝ կմախքային մկանների միոնևրալ սինապսում ացետիլխոլին — խոլինէսթերազ համակարգի դերին: Ատենախոսական թեման ֆիզիոլոգիական էր, սակայն այն, լինելով կենսաքիմիական ֆիզիոլոգիայի բնագավառի ուսումնասիրություն, առընչվում էր այդ ժամանակ դեռևս նոր ձևավորվող մոլեկուլային կենսաբանական պատկերացումների հետ: Երիտասարդ Գ.Փանոսյանի ամենօրյա անմիջական շփումները ակադեմիկոս Խ.Ս.Կոշտոյանցի հետ, Մոսկվայի պետական համալսարանում այդ տարիներին տիրող մոլեկուլային կենսաբանության մթնոլորտը՝ շնորհիվ երևելի գիտնականներ Վ.Ա. Էնգելգարդտի և Ա.Ն. Բելոզերսկու օրիգինալ հետազոտությունների, որոնք յուրօրինակ հիմք հանդիսացան և լուրջ նախադրյալներ ստեղծեցին երկրում մոլեկուլային կենսաբանության և կենսաֆիզիկայի զարգացման համար, մեծ նշանակություն ունեցան երիտասարդ գիտնականի հետագա մասնագիտական կողմնորոշման գործում: Գերասիմ Փանոսյանի հետագա գիտական հետաքրքրությունների ձևավորմանը, անկասկած, նպաստեց նաև 1961-1964 թվականներին նրա աշխատանքային գործունեությունը ԽՍՀՄ ԲԳԱ Պոլիոմիելիտի և վիրուսային էնցեֆալիտի ինստիտուտում հայտնի վիրուսաբան, պրոֆեսոր Վ.Ի. Ագոլի լաբորատորիայում: Հարկ է նշել, որ դրանք այն տարիներն էին, երբ խորհրդային կենսաբանությունը համընդհանուր ճգնաժամ էր ապրում՝ գտնվելով լիսենկոյական կեղծ գիտական դրույթների ազդեցության տակ, և ցանկացած նոր պատկերացում կենսաբանական գիտության բնագավառում տրվում էր մեծ ճիգերի շնորհիվ: Ահա այս տարիներին էր ձևավորվում երիտասարդ մասնագետ Գերասիմ Փանոսյանը որպես ապագա գիտնական-հետազոտող:

1963 թ. Գ.Հ. Փանոսյանը հրավիրվում է Հայաստան, հիմնադրում Երևանի պետական համալսարանի կենսաֆիզիկայի ամբիոնը, որն ընդմիջումներով ղեկավարում է շուրջ 28 տարի: Այդ տարիներին նա իրեն դրևորեց նաև որպես գիտամանկավարժական գործունեության հմուտ կազմակերպիչ: Պատահական չէ, որ 1977 թվականին նա նշանակվում է Երևանի պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, իսկ մեկ տարի անց՝ Երանի պետական անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի ռեկտոր: Շուրջ հինգ տարի աշխատելով այդ պատասխանատու պաշտոնում՝ պրոֆեսոր Գ.Փանոսյանը էապես բարելավեց բարոյա-հոգեբանական մթնոլորտն ինստիտուտում, անհաշտ պայքար մղեց տեղ գտած բացասական երևույթների դեմ: 1983-1986 թվականներին նա ստանձնում է Հայաստանի ԳԱ Փորձարարական կենսաբանության ինստիտուտի ղեկավարումը: Հարգարժան պրոֆեսորի մեղմ և հավասարակշիռ, բայց միաժամանակ խիստ սկզբունքային բնավորությունը, կազմակերպչական կարողություններն օգնեցին նրան զբաղեցնելու այդ պատասխանատու պաշտոնները: 1986թ. պրոֆ. Գերասիմ Փանոսյանը վերադարձավ հարազատ համալսարան, իր հիմնադրած ամբիոնը, որի պատվավոր վարիչն է 1997 թվականից:

Պրոֆեսոր Փանոսյանի կատարած ուսումնասիրություններն արժանացել են ոչ միայն հայրենական, այլև արտասահմանյան գիտնականների ուշադրությանը: 1966թ. գիտնականը հրավիրվում է Լոնդոն՝ Ուռուցքաբանության կենտրոն, որտեղ 1966-1967թթ. աշխատում և հետազոտություններ է կատարում պրոֆ. Բատլերի գլխավորած լաբորատորիայում (Դ. Ֆիլիպսի և Է. Ջոնսի հետ համատեղ): 1972թ. հայ գիտնականը աշխատում է Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտում՝ պրոֆեսոր Ջ. Բոնների լաբորատորիայում, իսկ 1976թ.՝ Պորտսմութի (Մեծ Բրիտանիա) պոլիտեխնիկական ինստիտուտում՝ պրոֆեսոր Բրեդբերիի լաբորատորիայում:

Լայն է պրոֆեսոր Փանոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ քրոմատինի և նրա բաղադրամասերի կառուցվածքա-ֆունկցիոնալ հետազոտություններ, գենային ակտիվության հորմոնալ կարգավորում և գենոմի վրա կենսաբանորեն ակտիվ այլ միացությունների ազդեցության մեխանիզմների բացահայտում, վերմոլեկուլային կառուցվածքների կազմավորման պրոցեսում մակրոմոլեկուլների փոխազդեցության ուսումնասիրում և այլն: Նման հիմնարար և արդիական հիմնահարցերի ուսումնասիրման ընթացքում որպես հետազոտման օբյեկտներ են ծառայել տարբեր կենսահամակարգեր, այդ թվում վիրուսներ և ֆագեր, բակտերիաներ, բույսեր, կենդանիներ, նորմալ և ուռուցքային բջիջներ, որոնք ուսումնասիրվել են ժամանակակից ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, կենսաֆիզիկական, իմունոլոգիական, մանրէաբանական, մոլեկուլային կենսաբանական մեթոդների կիրառմամբ:

Նշված հետազոտությունների մի մասը (որոշ կրճատումներով) ընդհանրացվել է Գ.Հ. Փանոսյանի ,Հիստոնների որոշ հատկությունների և ֆունկցիաների հետազոտությունը թեմայով դոկտորական ատենախոսության մեջ, որը պաշտպանվեց 1973թ., ինչպես նաև ,Հիստոնների կառուցվածքը և ֆունկցիանե ուշագրավ մենագրության մեջ (1978թ.), որի կարևոր նշանակությունը թե՛ մասնագետների և թե՛ ուսանողության համար դժվար է գերագնահատել: Նա շուրջ 300 գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում 2 մենագրության, բազմաթիվ գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում: Պրոֆեսոր Գերասիմ Փանոսյանի անմիջական աջակցությամբ ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնում կատարվել և պաշտպանվել են 3 դոկտորական ատենախոսություններ, նա ղեկավարել է շուրջ մեկ ու կես տասնյակ թեկնածուական ատենախոսություններ, որոնք նվիրված են կենսաֆիզիկայի և մոլեկուլային կենսաբանության բազմաբնույթ հիմնահարցերին:

Շնորհաշատ գիտնականը, սիրված, վաստակաշատ մանկավարժը իր բազմամյա աշխատանքի և հայ գիտական մտքին մատուցած ծառայությունների համար բազմիցս պարգևատրվել է մեդալներով և պատվոգրերով, իսկ 1981թ. արժանացել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Նա այսօր էլ մեզ հետ շարունակում է նույն եռանդով աշխատել՝ նվիրվածության, ազնվության, կարգապահության օրինակ հանդիսանալով թե՛ դասախոսների և թե՛ ուսանողների համար:

Երևանի պետական համալսարան,
կենսաբանության ֆակուլտետ,
կենսաֆիզիկայի ամբիոն: